



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունիսի 2017 թվականի թիվ 131 - Ա

ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՄԱՐԴԱՆՅԱՆԻՆ «ԲԵՐՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011թ. դեկտեմբերի 19-ի թիվ 203-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 13-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» թիվ 4 որոշումը և Ա. Մարդանյանի 2017 թվականի հունիսի 13-ի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Արմեն Սամվելի Մարդանյանին 2017 թվականի հունիսի 16-ից նշանակել «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում, կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով և լուծել 2017 թվականի ապրիլի 6-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱԲՈՎՅԱՆ

2017թ. հունիսի 16  
ք. Իջևան